Հաստատում եմ

<<Սյունիքի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի

տնօրեն Լ.Առաքելյան

2022-2023 ՈՒՍՏԱՐԻ

# ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ԴԱԿ Ա.Շաբանյան

## Կազմակերպչական մանկավարժական միջոցառումներ

| | Բովանդակություն | Կատարման ժամկետ |
|---|---|---|
| 1 | Հակահամաճարակային կանոնների պահպանմանն ուղղված աշխատանքներ և տեղեկատվության ապահովում աշակերտների և ծնողների շրջանում | Տարվա ընթացքում |
| 2 | Դասղեկների աշխատանքային պլանների մշակման վերահսկում և ներկայացում հաստատման | Սեպտեմբեր |
| 3 | Սեմինար-խորհրդակցություններ դասղեկների հետ | Ամեն ամիս |
| 4 | Սեմինար-խորհրդակցություններ նվիրված դասալսումների վերլուծությանը | |
| 5 | Անցանկալի վարք ցուցաբերող երեխաների հաշվառում | Սեպտեմբեր |
| 6 | Աշխատանք տանել սովորողների վարքի կուլտուրայի վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ | Տարվա ընթացքում |
| 7 | Հսկողություն իրականացնել սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ | Տարվա ընթացքում |
| 8 | Կազմակերպել սովորողների հանգիստն ու ժամանցը | Տարվա ընթացքում |
| 9 | Դասարանական խորհուրդների ձևավորում | Սեպտեմբեր |
| 10 | Աշակերտական խորհրդի ձևավորում | Սեպտեմբեր |
| 11 | Կազմակերպել աշակերտների ինքնակառավարման աշխատանքները | Տարվա ընթացքում |
| 12 | Կազմել ուստարվա համար ուսուցչական և աշակերտական հերթապահության գրաֆիկ | Սեպտեմբեր |
| 13 | Սոցիալապես անապահով երեխաների բացահայտում և հաշվառում | Սեպտեմբեր |
| 14 | Աշակերտական խորհրդի ժողով | Սեպտեմբեր |

## Դաստիրարակության նպատակն ու խնդիրները

Դաստիրակության նպատակն է՝ ապագա քաղաքացու ինքնաճանաչման, նրա անձի և անհատականության լիարժեք դրսևորման և զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, ազատ և ֆամակողմանի զարգացած, ազգային արժանապատվությամբ և քաղաքացիական գիտակցությամբ օժտված անձի ձևավորումը:

Այդ նպատակին հասցնելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ խնդիրները:

- Կրթության համակարգում արմատավորել ժողովրդական հարաբերությունների, ուսուցման աշակերտակենտրոն մեթոդներ,
- ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները կառուցել գործընկերային հիմքի վրա:
- Ձևավորել երեխաների ինքնաճանաչողության, ինքնակառավարման և ինքնուրույն գործելու, վերլուծական մտածողության, կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու, արդյունավետ հաղորդակցվելու հմտություններ և պատասխանատու վարք:
- Սովորողներին հաղորդակից դարձնել ազգային և համամարդկային արժեքներին, ձևավորել դրանց համադրման և արժևորման կարողություններ, նպաստել երեխաների արժեքային համակարգի կազմավորմանը՝ հայրենասիրության, հումանիզմի, հանդուրժողականության հիմքերի վրա:
- Պայմաններ ստեղծել երեխաների անձնային զարգացմանը ճանաչողական, գեղագիտական և հոգևոր պահանջմունքների բավարարմանը նպաստող կառույցների, (արտադասարանական աշխատանք, արտադպրոցական հաստատություններ) բնականոն գործունեության համար՝ աստիճանաբար ընդլայնելով կապը ընտանիքի և հասարակական այլ կառույցների հետ:
- Բարձրացնել և արդիականացնել մանկավարժների հոգեբանամանկավարժական պատրաստվածությունը:

## Աշխատանք դասղեկների և դասվարների հետ

Աշխատանքի բովանդակությունը

1. Օգնել դասղեկներին և դասվարներին դաստիարակչական աշխատանքների պլանները կազմելիս, աշխատել որպեսզի նրանք պլանավորելիս հաշվի առնեն նախորդ ուս. տարվա թերություններն ու բացթողումները:
2. Նրանց հանձնարարել և օգնել կազմակերպել այնպիսի միջոցառումներ, որոնք նպատակաուղղված լինեն համակողմանի, ներդաշնակ զարգացած մարդու դաստիարակությանը:
3. Հաճախակի լսել նրանց հաշվետվությունները դասարանում կազմակերպված դաստիարակչական աշխատանքների և դրանց արդյունքների մասին:
4. Կանխել աշակերտների վարքագծում եղած թերությունները՝ թափթփվածությունը, կոպտությունը, անբարեկիրթ վարվեցողությունը:

   Այդ ուղղությամբ անկացնել

   Զրույցներ

   - Քո վարքը և վարվեցողության կուլտուրան
   - Ո՞ւմ ես ցանկանում նմանվել
   - Ինքնասիրություն և հպարտություն
   - Վնասակար սովորությունները, ի՞նչպես խուսափել դրանցից և այլն:

Բանավեճեր

- Բարեկրթությունը որպես գնահատական:
- Ո՞րն է բարոյականության սահմանները:
- Ճշմարտություն-ինչպես է այն գնահատվում:
- Լինել մարդ, մարդկային-ահա լավագույն մարդու չափանիշը:

5. Ուշադրություն դարձնել ուսման մեջ ետ մնացող, դժվար դաստիարակվող երեխաներին, բացահայտել նրանց ետ մնալու պատճառները և միջոցներ ձեռնարկել դրանք կանխելու համար:
6. Ուշադրություն դարձնել աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը: Այդ ուղղությամբ անցկացնել համապատասխան միջոցառումներ նրանց ճիշտ կողմնորոշվելու համար:
   Այդ նպատակով անցկացնել զրույցներ՝
   - Ինչպե՞ս եմ պատկերացնում իմ ապագան:
   - Ինչպիսի՞ մասնագիտություն եմ ուզում ընտրել:
   - Աշխատանքով է ստեղծվում ամեն բան:
   - Կյանքը հարթ ճանապարհ չէ, պետք է աշխատել, մաքառել և պայքարել:

7. Աշակերտներին մասնակից դարձնել դպրոցի շրջապատի մաքրության, կանաչապատման, ծառատնկման աշխատանքներին:
8. Անցկացնել զրույց-զեկուցումներ երկրում կատարվող իրադարձությունների, քաղաքական վերլուծությունների ուղղությամբ:
9. Աշակերտներին ծանոթացնել պետական կարևոր փաստաթղթերին և բացատրել նրանց նշանակությունն ու կարևորությունը:
10. Հաճախակի անդրադառնալ հայ ժողովրդի անցած ուղուն, դրա դժվարություններին ու ձեռքբերումներին: Այդ նպատակով անցկացնել զրույցներ
    - Մեր ազգային հերոսները
    - Հայրենիք և հայրենասիրություն

Աշխատանքի բովանդակությունը

1. Դասղեկների մեթոդ-միավորումների աշխատանքների հիմքում պետք է ընկած լինի միջոցառումների ճիշտ ընտրությունը, նպատակայնությունը, մեթոդ-մանկավարժական հագեցվածությունը:
2. Ապահովել սերտ համագործակցություն դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչի աշխատանքներում:
3. Հետևել, որ դասղեկի ժամերը ծառայեն նպատակին, անցկացվեն ժամանակին և բարձր մակարդակով:
4. Պահանջել դասվար-դասղեկներից ուշադրություն դարձնել երեխաների գեղագիտական դաստիարակությանը, այն իրագործել բազմաբնույթ մեթոդներով՝ զրույցներ, բանավեճեր, ազգային ավանդական տոներ, մրցույթներ և այլն: Այդ նպատակով.
    - I- IV դասարաններում տալ հասկացություն գեղեցիկի ու լավի մասին, այն տեսնելու ու գնահատելու կարողություն մշակել:
    - V-X դասարանի աշակերտների միջև սահմանել մրցույթային կարգ՝ գեղեցիկ ձևավորված կաբինետներ, ճաշակով ձևավորված արվեստի գործ՝ նկար, ստեղծագործություն, ծեփ և այլն:
5. Վերոհիշյալը իրագործելու հետ մեկտեղ ստեղծել գեղագիտական անկյուն և ցուցադրել շնորհալի երեխաների ձեռքի աշխատանքները, ինչպես նաև անցկացնել զրույցներ և բանավեճեր:
    - Գեղեցիկը իմ պատկերացմամբ
    - Պարկեշտությունը, կիրթ վարվելաձևը գեղեցկացնում է մարդուն:
    - Բնության գեղեցկություն-ինչպե՞ս ես այն պատկերացում:
    - Գեղեցիկ արտաքին և գեղեցիկ ներաշխարհ և այլն:

# Աշխատանք աշակերտական խորհրդի հետ

## Աշխատանքի բովանդակությունը

1. Կազմաերպել դպրոցի աշակերտական խորհրդի և նրա անդամների ընտրությունը, ինչպես նաև հանձնախմբերի և նրանց ղեկավարների ընտրությունը
2. Օգնել աշակերտական խորհրդին պլանավորելու նոր ուսումնական տարվա աշխատանքները, կազմել համալիր ծրագիր և դնել խորհրդի անդամների քննարկմանը:
3. Աշակերտական խորհրդում ունենալ հետևյալ հանձնախմբերը
   - Ուսումնադաստիարակչական և կարգապահական ոլորտ
   - Իրավապաշտպան ոլորտ
   - Տեղեկատվական ոլորտ
   - Սոցիալ-առողջապահական ոլորտ
   - Մշակութային ոլորտ
4. Կազմակերպել աշակերտական խորհրդի աշխատանքներ, ապահովել նրա գործունեությունը դպրոցի ներքին աշխատանքին
   - Միասնական կոլեկտիվի ստեղծու մ
   - Մասնակցություն կրթության և դաստիարակության գործին
   - Աշակերտական հերթապահություն
5. Աշակերտական խորհրդի նիստում լսել դասարանների առաջադիմության հարցեր:
6. Կազմակերպել միջդասարանային մրցույթներ՝
   - Լավագույն դասասենյակ
   - Լավագույն շարադրություն
   - Լավագույն ձեռագիր և նկար
7. Հետևել, որպեսզի աշակերտների ուժերով լույս տեսնեն պատի թերթեր, կազմվեն վահանակներ:
8. Ուշադրության կենտրոնում պահել ստեղծագործող և շնորհալի աշակերտներին, բացահայտել նրանց և խրախուսել լավագույններին:
9. Աշակերտական ուսումնական հանձնախմբում լսել ետ մնացող աշակերտների հարցերը, կազմակերպել ընկերական փոխօգնություն:
10. Պատշաճ մակարդակով կազմակերպել աշակերտների հանգիստը և ժամանցը:

# Աշխատանք ծնողների հետ

Աշխատանքի բովանդակությունը

1. Ապահովել ծնողների սերտ կապը դպրոցի հետ՝ հաճախակի հրավիրել ծնողական ժողովներ (համադպրոցական և դասարանային), որտեղ ծնողներին ծանոթացնել դպրոցում կազմակերպվող ուսումնադաստիարակչական աշխատանքներին, դպրոցի առաջադիմությանը, ծնողների և ուսուցիչների համատեղ գործունեության արդյունքներին ու անելիքներին:
2. Հատուկ ուշադրություն դարձնել ետ մնացող, վարքի շեղումներ ունեցող, դժվար դաստիրարակվող երեխաների ծնողների հետ տարվող աշխատանքներին, նրանց դպրոց արտահերթ հրավիրել զրուցել և համատեղ որոշումներ ընդունել
3. Ծնողների համար կազմակերպել զրույց-զեկուցումներ, որոնք կօգնեն ճիշտ և համատեղ կազմակերպել երեխաների դաստիարակությունը:

Թեմաներ

- Դաստիարակությունը սկսվում է ընտանիքից
- Ընտանիքում է ձևավորվում մարդու անհատականությունը
- Ծնողի ուշադրությունը և հետևողականությունը:

4. Հատուկ ուշադրություն դարձնել դասարանական ծնողխորհուրդների աշխատանքին և աջակցել նրանց:
5. Տարբեր միջոցներով ուժեղացնել ծնող-դպրոց համագործակցությունը և ծնողներին ներգրավել դպրոցի աշխատանքներին:

## Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1 | Օժանդակել «Մասնագիտական կողմնորոշում» ծրագրի մասնակցությանը, կազմակերպել աշխատանքներ աշակերտների մասնագիտական կողմնորոշումը ճիշտ նպատակառղղելու համար: (կազմակերպել գործնական այցեր) | Ուսումնական տարվա ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱԿ |
| 2 | Կազմակերպել առարկայական շաբաթներ, միամսյակներ<br>• լույս ընծայել պատի թերթեր | Ուստարվա ընթացքում | Փոխտնօրեններ, ԴԱԿ, մասնախմբեր, նախագահներ, ուսուցիչներ |
| 3 | Դասղեկական հետևողական աշխատանքի միջոցով հնարավորինս նվազեցնել բացակայությունները | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱԿ |
| 4 | Գեղագիտական դաստիարակություն<br>• երեխաների մեջ դաստիարակել գեղագիտական մտածողություն և համոզմունքներ՝ ելնելով սովորողների տարիքային առանձնահատկություններից: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱԿ |

## Ներդպրոցական վերահսկողության համակարգ

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1 | Յուրաքանչյուր ամսվա վերջին՝ տնօրինության նիստում քննարկել սովորողների հարցը | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱԿ |
| 2 | Մշտապես ուշադիր լինել դժվար առաջադիմող աշակերտների հետ տարվող աշխատանքներին, քննարկել տնօրինության նիստերում | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱԿ |
| 3 | Ստուգել դաստիարակչական աշխատանքային պլանի բովանդակությունը, կատարել վերլուծություն՝ նկատի ունենալով նախատեսվող աշխատանքի նպատակաուղղվածությունը, հետևողականությունը, տարիքային համապատասխանեցումը դասարանի առանձնահատկություններին | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱԿ |
| 4 | Վերահսկել միջոցառումները՝ որքանով են նրանք նպատակային և որքանով են համապատասխանում թեմային | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱԿ |

Պարտադիր կրթության կենսագործում

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1 | Հնարավորության սահմաններում սոցիալապես անապահով ընտանիքներին ապահովել դասագրքերով և գրենական այլ պիտույքներով : | Սեպտեմբեր | ՄԿԱ<br>ԴԱԿ |
| 2 | Կատարել միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաների հաշվառում, հնարավորության սահմաններում օգնել նրանց: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱԿ |
| 3 | Ուշադրության կենտրոնում պահել ետ մնացող աշակերտներին, կազմակերպել աշխատանքներ նրանց հետ: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱԿ |
| 4 | Դժվար առաջադիմող աշակերտներին, ըստ նրանց ընդունակությունների ու հետաքրքրությունների ընդգրկել արտադրոցական խմբակներում: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱԿ |
| 5 | Երեխաներին ծանոթացնել դպրոցի ներքին կարգապահական կանոններին, գործող ռեժիմին, ինչպես նաև իրենց իրավունքներին ու պարտականություններին: Ստեղծել ջերմ մթնոլորտ ուսումնական գործընթացը բարեհաջող սկսելու համար : | Սեպտեմբեր | Փոխտնօրեն<br>ԴԱԿ |

Աշխատանք ներառական կրթության մեջ ընդգրկված աշակերտների հետ

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1 | Ապահովել ԿԱՊԿՈՒ երեխաների մասնակցությունը դպրոցում իրականացվող միջոցառումներին և աշակերտական խորհրդի աշխատանքներում: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱԿ |
| 2 | Ապահովել ԿԱՊԿՈՒ սովորողների և մյուս երեխաների հավասարության սկզբունքը | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱԿ |
| 3 | Համագործակցել դժվա վարք ցուցաբերողսովորողների ծնողների հետ ցուցաբերել աջակցություն | | |

## Աշխատանք ծնողների հետ

| | Աշխատանքի բովանդակություն | Կատարման ժամկետ | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1 | Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտադպրոցական, դաստիարակչական աշխատանքներին | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱԿ |
| 2 | Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը՝ սովորողների ուսուցման ու դաստիարակության բարելավման գործում: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱԿ |

## Կազմակերպական-մանկավարժական աշխատանք

| | Աշխատանքի բովանդակություն | Կատարման ժամկետը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1 | Ուսումնական մասնաշենքի յուրաքանչյուր հարկում, բակում, ձևավորված սրահներում կազմակերպել ամենօրյա աշակերտական հերթապահություն: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱԿ |
| 2 | Կազմակերպել աշակերտների ինքնակառավարման աշխատանքները՝ ըստ դպրոցի աշակերտական կանոնադրության: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱԿ |
| 3 | Դասղեկների հետ ճշտել սոցիալապես անապահով, որբ և միակողմանի ծնողազուրկ երեխաների ցուցակը և հնարավորության սահմաններում ապահովել անվճար դասագրքերով: | Սեպտեմբեր | ՄԿԱ<br>ԴԱԿ<br>Դասղեկներ<br>Ծնողներ<br>Նախագահ |
| 4 | Կազմակերպել աշակերտների ժամանցը և արտադասարանական, արտադպրոցական շփումները: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱԿ<br>Դասղեկներ |
| 5 | Կազմակերպել օգնություն սովորողներին ուսումնական գործընթացում: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱԿ |
| 6 | Հայտնաբերել երեխաների դաստիարակության հետ կապված խնդիրները, գտնել դրանց լուծման | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱԿ |

Սեպտեմբեր

| | Աշխատանքի բովանդակություն | Կատարման ժամկետը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1 | Նախապատրաստվել սեպտեմբերի 1-ին՝ գիտելիքի օրվան նվիրված միջոցառմանը | Օգոստոս | ԴԱԿ |
| 2 | Առաջին դասարանցիների մուտքը դպրոց | Սեպտեմբերի 1 | ԴԱԿ<br>Դասվար |
| 3 | <<Գիտելիքի և դպրության օր>> | Սեպտեմբերի 1 | ԴԱԿ |
| 4 | Հրավիրել սովորողների ընդհանուր ժողովներ (տարեկան երկու անգամից ոչ պակաս) նիստեր (ամիսը մեկ անգամ) | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱԿ<br>ԱԽ |
| 5 | Սովորողների ընդհանուր ժողով | Սեպտեմբերի 8 | ՄԿԱ<br>ԴԱԿ<br>ԱԽ |
| 6 | Համակարգել աշակերտական խորհրդի նախագահի ընտրության նախապատրաստական աշխատանքները<br>. նախագահի թեկնածուների առաջադրում<br>. քարոզարշավ | Սեպտեմբեր | ՄԿԱ<br>ԴԱԿ<br>ԱԽ |
| 7 | ԱԽ նախագահի ընտրություն աշակերտական խորհրդի կազմի հաստատում | Սեպտեմբեր | ՄԿԱ<br>ԴԱԿ<br>ԱԽ |
| 8 | ՀՀ Անկախության 31 ամյակին նվիրված դասղեկի ժամերի շաբաթ | Սեպտեմբերի 19-23 | ՄԿԱ<br>ԴԱԿ<br>դասղեկներ |

| | | | |
|---|---|---|---|
| 9 | Ակտիվացնել աշակերտների մասնակցությունը դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքներին ապահովելով կրթության որակի բարելավում: | Ուստարվա ընթացքում | ԴԱԿ |
| 10 | Օգնություն ցույց տալ ցածր առաջադիմությամբ երեխաներին | Ուստարվա ընթացքում | ԴԱԿ |
| 11 | Թարմացնել ԱԽ-ի անկյունը | Սեպտեմբեր | ԴԱԿ<br>ԱԽ |
| 12 | Արձանագրել դպրոցի հաջողությունները օլիմպիադաներում և արտադպրոցական մրցույթներում: | Ուստարվա ընթացքում | ԴԱԿ |

## Հոկտեմբեր

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1 | Կենդանիների միջազգային օրվա կապակցությամբ տարրական դասարանների երեխաները ներկայացնեն իրենց սիրելի կենդանիներին | Հոկտեմբերի 4 | ԴԱԿ<br>Դասվարներ |
| 2 | Իրականացնել ԿԱՊԿՈՒ աշակերտների համար ստեղծված պայմանների պարբերական դիտարկումներ և վերլուծություններ | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱԿ<br>Ուսուցչի օգնական |
| 3 | Աջակցել ուսուցչի օրվան նվիրված միջոցառման կազմակերպմանը | Հոկտեմբեր | ԴԱԿ<br>Ուսուցչուհի<br>Ի. Գրիգորյան |
| 4 | Գրադարանի օրվա կապակցությամբ ԱԽ-ի անդամները գրադարանում | Հոկտեմբերի 7 | ԴԱԿ<br>ԱԽ |

| | | | |
|---|---|---|---|
| | կստեղծեն անկյուն <<Գիրքը սեր է>> խորագրով | | Գրադարանավարուհի |
| 5 | Գրադարանում պատի պաստառի պատրաստում | Հոկտեմբերի 7 | ԴԱԿ |
| 6 | Գրադարանում պատռված գրքերի վերանորոգում | Հոկտեմբեր | ԴԱԿ<br>ԱԽ |
| 7 | Կազմակերպել համադպրոցական հերթապահություն | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱԿ |
| 8 | Ուսումնասիրել դպրոցի սովորողների բացակայությունները և արդյունքները ամփոփել ԱԽ նիստերի ժամանակ | Ուստարվա ընթացքում | ԴԱԿ |

Նոյեմբեր

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1 | Արձանագրել սովորողների հաջողությունները և խնդիրները | Յուրաքանչյուր ամիս | ԴԱԿ |
| 2 | Կազմակերպել շաբաթօրյակ | Նոյեմբեր | Տնօրեն<br>ՄԿԱ<br>ԴԱԿ<br>դասղեկ |
| 3 | Ողջույնի միջազգային օր: Աշակերտները իրար կողջունեն աշխարհի տարբեր լեզուներով | Նոյեմբերի 24 | ՄԿԱ<br>ԴԱԿ |

Դեկտեմբեր

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1 | Մոմավառություն ի հիշատակ դեկտեմբերի 7-ի երկրաշարժի զոհերին | Դեկտեմբեր | ՄԿԱ<br>ԴԱԿ |
| 2 | Կազմակերպել դասարանների ձնավորումները, պատրաստվել | Դեկտեմբեր | ԴԱԿ<br>դասղեկներ |

| | | | |
|---|---|---|---|
| | Դիմավորելու Նոր տարին | | Դասվարներ |
| 3 | <<Արի Նոր տարի>> խորագրի շրջանակներումպատրաստվել դպրոցում դիմավորելու գալիք տարին: | Դեկտեմբեր | ԴԱԿ<br>Դասղեկներ<br>Դասվարներ |
| 4 | Ամփոփել առաջին կիսամյակի աշխատանքները | Դեկտեմբեր | ԴԱԿ<br>ԱԽ |
| II կիսամյակ | | | |
| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու |
| 1 | Կազմակերպել ուսուցողական դասմիջոց <<Զանգակատուն>> խորագրով նվիրված Պ. Սնակին | Հունվար | ԴԱԿ |
| 2 | Շախմատի մրցույթի անցկացում | Փետրվար | ԴԱԿ<br>Շախմատի ուսուցիչ |
| 3 | Ինքնակառավարման օր | Մարտ | ՄԿԱ<br>ԴԱԿ |
| 4 | Հայրենասիրական ֆիլմերի դիտում | Ապրիլ | ՄԿԱ<br>ԴԱԿ |
| 5 | Եղեռնի զոհերի հիշատաիօր, այցելություն հուշահամալիր | Ապրիլի 24 | ՄԿԱ<br>ԴԱԿ |
| 6 | Կազմակերպել ծաղկի տոնին նվիրված միջոցառում | Ապրիլի 27 | ՄԿԱ<br>ԴԱԿ |
| 7 | Դպրոցի տարածքում կազմաերպել շաբաթօրյակ | Ապրիլ | ՄԿԱ<br>ԴԱԿ |
| 8 | Կազմակերպել և անցկացնել սպորտային միջոցառումներ | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱԿ<br>Ֆիզկուլտուրայի |

| | | | ուսուցչուհի |
|---|---|---|---|
| 9 | Նախաձեռնել և կազմակերպել մշակութային միջոցառումներ | Ուստարվա ընթացքում | ԴԱԿ<br>ԱԽ |
| 10 | Սովորողների կարգապահական աշխատանքի բարելավում | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱԿ |
| 11 | Պատրաստվել «Վերջին զանգ»-ի կազմակերպմանը | Մայիս | ԴԱԿ<br>Դասղեկ |